ԱՆԱՀԻՏ ՌԱՖԱՅԵԼԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Դաշնակահարուհի,
Երևանի Կոմիտասի անվ. պետական
կոնսերվատորիայի դոցենտ

ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2-ՐԴ ՓԱՌԱՏՈՆԸ

***2010** թ. դեկտեմբերի 6-ին, 9-ին և 10-ին Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի համերգասրահում տեղի ունեցավ հայ կոմպոզիտորների կամերային ստեղծագործությունների 2-րդ փառատոնը: Ինչպես 1-ինը, որ տեղի էր ունեցել 2009 թ. դեկտեմբերին, այս փառատոնը նույնպես կազմակերպել էր Կոմիտասի անվ. ԵՊԿ կամերային անսամբլի ամբիոնը, ռեկտորատի, Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրինության և Հայկական երաժշտական համաժողովի աջակցությամբ:*

Համերգաշարին մասնակցում էին բուհի կամերային անսամբլի ամբիոնի թե՛ ուսանողները և թե՛ դասախոսները: Բացման խոսքով հանդես եկավ ԵՊԿ պրոֆեսոր Արմեն Գևորգի Բուդաղյանը՝ նշելով հայ կամերային երաժշտության դերն ու կարևոր նշանակությունը կոնսերվատորիայի ուսումնակատարողական կյանքում: Իր խոսքում բանախոսն անդրադարձավ փառատոնների կարևորությանը:

1-ին անգամ կատարվեց Դավիթ Սաթյանի մեկ մասանի դաշնամուրային Կվարտետը, որն աչքի է ընկնում լավատեսական տրամադրությամբ և պարային ռիթմով:

Բեմելն էր նաև Սիմոն Հովհաննիսյանի դաշնամուրային Տրիոն՝ ռոմանտիկ, գողտրիկ մեկ մասանի ստեղծագործությունը:

Վարդան Ամենյանի դաշնամուրային Կվինտետը նույնպես հնչում էր առաջին անգամ: Մեկ մասանի այս ստեղծագործությունը ծավալուն է և ընդգրկում է երկու հակադիր թեմա: Թեմաներից մեկը հիշեցնում է հայկական հոգևոր մեղեդայնությամբ երաժշտություն, 2-րդը ռիթմիկ է, հաստատակամ և արտացոլում է ժամանակակից կյանքը: Փառատոնին կատարվեցին XX դարի 2-րդ կեսի ստեղծագործություններ ևս՝ Ստեփան Զորաշյանի թավջութակի և դաշնամուրի Սոնատը և դաշնամուրային Կվինտետը, Ստեփան Նաղդյանի դաշնամուրային Տրիոն, դաշնամուրի և թավջութակի Սոնատը, Գրիգոր Հախինյանի ջութակի և թավջութակի Սոնատը, Ալեքսանդր Հարությունյանի «Սասունցիների պարը» (փոխադրումը՝ հեղինակի դաշնամուրային Կվինտետի համար):

Կամերային անսամբլի ամբիոնում հաճախակի կատարվող ստեղծագործություններից փառատոնում տեղ էին գտել Առնո Բաբաջանյանի և Ալեքսանդր Հարությունյանի դաշնամուրային Տրիոները, Էդուարդ Խաղագործյանի դաշնամուրային Կվինտետը, Ստեփան Շաքարյանի դաշնամուրային Տրիոն: Համերգներին բարձր շունչ հաղորդեցին Ռուբեն Ալթունյանի, Վարդան Ամենյանի ջութակի և դաշնամուրի Սոնատները և Ստեփան Շաքարյանի լարային Կվարտետը:

Այս միջոցառման ծրագիրը մեծ հետաքրքրություն էր առաջացրել թե՛ դասախոսների և թե՛ ուսանողների շրջանում: Մասնակիցների համար պրոֆեսիոնալ տեսանկյունից մեծ դեր խաղաց հեղինակների հետ սերտ համագործակցությունը: Պետք է հատուկ նշել կամերային անսամբլի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ալլա Սիրակի Բերբերյանի գործունեա կազմակերպչական դերը և ամբիոնի բոլոր դասախոսների մասնագիտական, անմնացորդ վերաբերմունքն այս համերգաշարի հանդեպ:

Ցանկալի է, որ այս փառատոնը շարունակական լինի և նպաստի հայ կոմպոզիտորների կամերային ստեղծագործությունների բացահայտման և տարածման գործին:

Լուսինե Հարությունյան, Աստղիկ Հլղաթյան
(դոցենտ՝ Ա. Ռ. Իսրայելյանի դասարան)
Ա. Խաչատրյանի տուն թանգարան
6 դեկտեմբերի 2010 թ.

Резюме

Статья доцента ЕГК Анаит Рафаэловны Исраэлян “II фестиваль камерных сочинений армянских композиторов” **рецензия на** концертное исполнение, в том числе и премьерное, армянской музыки студентами и преподавателями кафедры камерного ансамбля ЕГК в Доме-музее А. Хачатуряна с 6 по 10 декабря 2010 г.

Summary

Article of a lecturer of YSC Anahit Rafael Israelian “II Festival of chamber works by Armenian composers” **review** of the concert, including the premiere, armenian music by students and faculty chair of the chamber ensemble at YSC un A. Khachaturian’s House Museum from 6 to 10 December 2010.